

Ակնհայտ է տրանստերմինոլոգիայի տարածումը գործարար անգլերենի այնպիսի շերտերում, ինչպիսիք են տնտեսագիտությունը, կառավարումը, հաշվապահությունը, ֆինանսները, շուկայաբանությունը և այլն, որտեղ տրանստերմինների ներթափանցումն ուղեկցվում է իմաստների մասնակի կամ ամբողջական փոփոխությամբ, տերմինի իմաստի լայնացմամբ կամ նեղացմամբ:

Ատենախոսը կատարել է հսկայածավալ աշխատանք փոխաբերականացման միջոցով գործարար անգլերենում տրանստերմինների ուսումնասիրման, ինչպես նաև փոխաբերականացման արդյունքում ձևավորված տրանստերմինների իմաստաբանական, ճանաչողական, կառուցվածքային և ծագումնաբանական վերլուծության և դասակարգման ուղղությամբ:

Արուսյակ Իվանյանի աշխատանքի արժանիքներից է մանրագնին մշակված և տրամաբանորեն հստակ դասակարգված գործարար անգլերենում կենդանուն արտահայտող տրանստերմինների լեզվաբանական վերլուծությունը, գունային և բնագիտական տրանստերմինների խոսքիմասային պատկանելության, բառակազմական միջոցների և լեզվագործաբանական առանձնահատկությունների վերհանումը, ինչպես նաև բնագիտական տրանստերմինների ձևաբանական, իմաստաբանական և հանրալեզվաբանական փոփոխությունների տարածամանակյա և համաժամանակյա վերլուծությունները:

Գրախոսվող աշխատանքն ունի կուռ կառուցվածք. այն ընգրկում է ներածություն, երեք գլուխ՝ իրենց ենթագլուխներով, օգտագործված գրականության ցանկ և հավելվածներ: Միանգամայն ընդունելի են ատենախոսի կողմից ձևակերպված օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացված դրույթները:

Ցանկանում ենք նշել, որ ատենախոսության նպատակը, վարկածը և դրանց հիման վրա սահմանված հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակները, մեթոդները, գիտական նորույթը, պաշտպանության դրված դրույթները, տեսական և

գործնական արժեքը լիովին համապատասխանում են գիտական հետազոտությանը ներկայացվող պահանջներին:

Որպես դրական ձեռքբերումներ կարելի է փաստել, որ տվյալ գիտական աշխատանքի հետազոտության շրջանակներում ատենախոսը.

- Նպաստել է գործարար անգլերենի որպես համընդհանուր միջազգային լեզվի բովանդակության նորացմանը՝ առանձնացնելով գործարար անգլերենի տերմինաբանությունը և տրանստերմինոլոգիան՝ ուղղված նոր գիտական տերմիններ ձևավորելուն:
- Հստակեցրել է տրանստերմինների կառուցվածքը, որոնք բաղկացած են տարբեր խոսքի մասերից՝ գոյականից, ածականից, որոշիչ հոդից և նախդիրներից:
- Առանձնացրել է իմաստաբանական վերլուծության արդյունքում նկատված տրանստերմինների իմաստի լայնացման և նեղացման օրինակները:
- Ուսումնասիրել է բառաբարդման հետևանքով առաջացած տարբեր կառուցվածքային բանաձևերով տրանստերմինները՝ տրանստերմինի իմաստի լայնացում բաղադրիչի հաշվին:
- Ճանաչողական վերլուծության է ենթարկել հիմնականում կենդանուն արտահայտող, գունային և բնագիտական տրանստերմինները, թարգմանել դրանք անգլերենից հայերեն, որը հուսալի հիմք է բառաբանագրության համար:
- Ընդգծել է այն կառուցվածքային փոփոխությունները, որոնք կենդանուն արտահայտող տրանստերմինների պարագայում քիչ նկատելի, սակայն ակնառու կերպով ընգծվում են իմաստի ընդլայնման գործընթացում և վերածվում գիտական հասկացության:

- Առանձնացրել է գործարար անգլերենում գերակշռող գունային տրանստերմինները, որոնք ձևավորում ու զարգացնում են գործարար ընթացակարգերն ու հաղորդակցական միջոցները:

Աշխատանքում տեղ են գտել այնպիսի հետաքրքիր վերլուծություններ, որոնք էապես նպաստում են այս կամ այն գործարար ոլորտների տնտեսական խոսույթում իմաստային ծավալի և կառուցվածքի ընկալմանն ու կշռադատմանը (էջ՝ 87-94): Հետաքրքրություն է առաջացնում նաև յուրահատուկ հարցաշարային մեթոդի կիրառմամբ տրանստերմինների հանրալեզվաբանական և ճանաչողական առանձնահատկությունները վերհանելու, ուսանողների բառապաշարն ու հաղորդակցական հմտությունները զարգացնելուն ուղղված բացահայտումները (էջ 82):

Ցանկանում ենք հատուկ նշել, որ Արուսյակ Իվանյանի ատենախոսությունը գրված է գրագետ հայերենով, այն տրամաբանորեն շարադրված և հստակ բովանդակությամբ ամբողջական հետազոտություն է՝ ուղղված գործարար անգլերենի տերմինաբանության օպտիմալացմանը, տրանստերմինների ձևավորմանն ու ավտոմատացմանը, ուսանողի լեզվի իմացության տվյալ մակարդակի և հաղորդակցական (լեզվական, գործաբանական, հանրամշակութային) կոմպետենտության զարգացմանը:

Վստահորեն կարելի է պնդել, որ ատենախոսի կողմից մշակված տրանստերմինների համակարգը նպատակաուղղված է փոխելու գործարար անգլերենի ուսուցման նպատակների առաջնահերթությունները, ճշգրտելու ուսուցման բովանդակությունը՝ ըստ կիրառվող եզրույթների, առաջին պլան մղելով գործառնությունների զաղափարը և ուսանողների իրական խոսքային գործունեության կարողությունների զարգացումը:

Բարձր գնահատելով կատարված երկարատև, բազմափուլային հետազոտությունը՝ այնուհանդերձ կցանկանայինք նշել որոշ թերություններ.

- Թեմայի ուսումնասիրման ընթացքում հեղինակն օգտվել է մի շարք հեղինակավոր լեզվաբանների աշխատություններից, որոնց գերակշռող մասը լեզվակիրներ չեն, մինչդեռ լեզվամտածողության զարգացման առումով լավ կլիներ ներառել ամերիկացի և բրիտանացի գիտնականների, որքան էլ որ թեման վերաբերում է միջազգային տերմինաբանությանը:
- Հետազոտությունը կշահեր, եթե կիրառված մեթոդների շարքում հեղինակը ներառեր տեքստային կորպուսի մեթոդը, որը կորպուսային գործիքներով և սովյալներով որոշակի լեզվական տարածքում վիճակագրական վերլուծություն է իրականացնում բնական համատեքստում:
 - Հայոց լեզվում «տերմինաբանություն» բառն ունի եզրաբանություն, եզրույթաբանություն և եզրութաբանություն տարբերակները, որոնք կարող էին օգտագործվել աշխատանքում:

Վերը նշվածն ամեննին չի նվազեցնում ատենախոսի կատարած ուսումնասիրության արժանիքները: Նյութի պատկառելի ծավալով, իր միջգիտակարգային բնույթով և բովանդակությամբ, աշխատանքի վերլուծական ու մեկնողական մասի հազեցվածությամբ Արուսյակ Հենրիկի Իվանյանի ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները: Սեղմագիրը ևս համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Կարծում ենք, որ ատենախոս Արուսյակ Հենրիկի Իվանյանը արժանի է ժ. 02. 07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

